



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



Ս. ԱՍՏՈՒԾԱԾՆԱՅ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ

ՀԱՅ ՏՈՒՆԸ ՊԷՏՔ Է ԸԼԼԱՅ ԱՍՏՈՒԾԱՅԱԾՈՅ ՕԾԱՆ

ՊԱՏԳԱՄԵՅ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ



Կիրակի, 14
Օգոստոսը տօնն է Ս.
Աստուածածնայ
Վերփոխման, նուիրական
տօն մը՝ Հայ եկեղեցւոյ ու
հայ ընտանիքներուն
համար, նկատի ունենալով,
որ մեր դարաւոր
պատմութեան մէջ,
Աստուածամայրը եղած է ու
կը մնայ Հայ Մօր ու Հայ
Ընտանիքին յատուկ
պաշտամունքի առարկան,
տիպար մը՝ մայրութեան,
առաքիտութեան,

զոհաբերութեան ու համեստութեան:

Այս տօնին առիթով, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Ս. Պատարագ մատուցեց Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, տուաւ օրուան խորհուրդը վեր առնող պատգամ մը եւ ապա, յաւարտ Ս. Պատարագի, կատարեց աւանդական խաղողօրհները:

Իր պատգամին մէջ, Առաջնորդ Սրբազանը խօսեցաւ Աստուածամօր առաքիտ կեանքին ու այդ պատճառով անոր շնորհուած առիթներուն մասին, որոնց վերջինն էր երկինք փոխադրումը, որուն յիշատակը կը նշէ մեր եկեղեցին, իբրեւ տօն վերափոխման: Առաջնորդ Սրբազանը կարեւորութեամբ կանգ առաւ Ս. Աստուածածինի հանդէպ քրիստոնեայ ժողովուրդներու, բայց մասնաւորաբար հայութեան յատուկ սիրոյն ու յարգանքին վրայ, նշելով, որ ան կը նկատուի մարմնացումն ու խորհրդանիշը սիրոյ, զոհաբերութեան, համեստութեան, հոգածութեան ու բազմաթիւ այլ առաքիտութեանց: Ան նաեւ խորհրդանիշ է Մօր, ու

հետեւաբար, Հայ Մայրը դարերու ընթացքին գայն ընդունած է իբրեւ օրինակելի տիպար, անոր հանդէպ սերը հասցուցած է պաշտամունքի աստիճանի: Ան շեշտեց, որ մեր ընտանիքներուն գլխաւոր պահապանն է մայրը, որ ընտանիքը կը վերածէ սիրոյ խորանի, այս մօտեցումով ալ, Հայ Տունը պետք է ըլլայ աստուածահաճոյ օճախ: Սրբազան Հայրը վեր առաւ հայ մօր դաստիարակի առաքելութիւնն ու յատկանիշը, ընդգծելով, որ այս առաքելութիւնը պետք է այնպիսի ներգործութիւն ունենայ, որ անոր ենթարկուողը ըլլայ Աստուծոյ սիրելի ու հաւատարիմ գաւակ, այդ հաւատարմութիւնը տարածուի նաեւ եկեղեցւոյ ու ազգին վրայ:

Յայտնենք, որ Աստուածածնայ Վերափոխման տօնին առիթով, յաւարտ Ս. Պատարագի՝ արանդական խաղողօրհնէք տեղի ունեցաւ մեր Թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ:

PRELATE CELEBRATES DIVINE LITURGY AT ST. MARY'S CHURCH ON THE FEAST OF THE ASSUMPTION OF THE HOLY MOTHER OF GOD



On Sunday, August 14, 2011, the Feast of the Assumption of the Holy Mother of God was ceremoniously celebrated in Prelacy Churches with Divine Liturgy and the blessing of grapes. The Feast is a particularly special and meaningful one for the Armenian Church and Armenian families, as Mary the Holy Mother of God is revered by Armenians as the role model for motherhood, virtue, sacrifice, and humility.

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, celebrated the Feast of the Assumption at St. Mary's Church in Glendale where he celebrated Divine Liturgy, delivered the sermon, and conducted the blessing of grapes.

In his sermon the Prelate exalted the virtuous life of St. Mary and spoke of the deep love and reverence of Christians for the Holy Mother of God, stating that for the Armenian people in particular, St. Mary is the embodiment of love, purity, righteousness, and humility, and is regarded as the ideal mother by Armenian mothers. The Prelate emphasized the invaluable and unique role and responsibility Armenian mothers have to make their homes pleasing in the eyes of God and to raise good and God-fearing children who are instilled with our religious and national values.

At the conclusion of the service, the Prelate conducted the blessing of grapes, which were then distributed to the faithful to take to their homes and share with their families and loved ones.

